

7313



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կատարող  
Տիգրան Գաբրիելյան

«28» 06 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 104 - 24

Նախաձեռնող՝

«ԻՄԵՋԻՆԵՐԵՎԱՆ» ՍՊԸ  
Ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 15/3

Գործունեությունը՝

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի  
Մարգարայի խճուղի 12 հասցեում ֆուտբոլային ակումբի  
կառուցում  
Արմավիրի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 104 - 24

«28» հունիս 2024թ.

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարգարայի խճուղի 12 հասցեում նախատեսվող ֆուտբոլի ակումբի կառուցման գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԻՄԵՋԻՆԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին Մարգարայի խճ.12

**Ներածական մաս.** «ԻՄԵՋԻՆԵՐԵՎԱՆ» ՍՊ ընկերությունը Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարգարայի խճուղի 12 հասցեում նախատեսում է կառուցել ֆուտբոլի ակումբ՝ նախատեսված ակադեմիայի համար:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա.» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը՝ №03102023-04-0110 /ծածկագիրը՝ 04-002-0305-0037/, Վաղարշապատի համայնքապետարանի կողմից 25.01.2024թ. տրված №СРР0-0001-0873 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

**Նկարագրական մաս.** Համաձայն հայտի ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ նախատեսվում է կառուցապատողին սեփականության իրավունքով պատկանող 5,5601 հա մակերեսով հողամասում կառուցել ֆուտբոլի ակումբ: Տարածքում արդեն իսկ առկա են շենք-շինություններ և ենթակառուցվածքներ: Նախատեսվում է տարածքի բարեկարգման, նոր երեք հարկանի շենքի կառուցման, գոյություն ունեցող շենքի ճակատների երեսպատման, թարմացման և կցակառուցի ավելացման աշխատանքներ: Նոր կառուցվող շենքի առաջին հարկը կառուցվելու է 0,00 նիշում՝ երկու մասնաշենքով, ընդհանուր 1132 մ<sup>2</sup> մակերեսի վրա տեղակայվելու են ընդունարան, ցուցասրահ, մարզասրահ, սրճարան-ճաշարան, խոհանոց, հանդերձարաններ, սանհանգույցներ, լվացքատուն, մաքրուիիների սենյակ, բուժավագան, սաունա, բժշկի սենյակ, աստիճանավանդակ: Երկրորդ հարկում՝ 1145,3 մ<sup>2</sup> մակերեսի վրա լինելու են հանգստի սենյակներ, սանհանգույցներ, աշխատասենյակներ, ժամանցի տարածք, խոհանոց





Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են 2900 մ<sup>3</sup> ծավալի հողային աշխատանքներ: Հանված հողային զանգվածը ամբողջովին պահպանվելու է տեղում և աշխատանքների ավարտից հետո օգտագործվելու է հետլիցքի նպատակով:

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգից, իսկ կոմունալ-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար շինհրապարակում տեղադրվելու են 2 հատ 1,20X1,50 չափերի շարժական սանհագույցներ (բիոզուգարան):

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման հարթակում: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման հարթակով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային ջրահեռացման ցանցին:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և գոյություն ունեցող կանաչ տարածքների խնամք, վերականգնում: Կանաչապատ տարածքի համար ոռոգումը կատարվելու է կաթիլային եղանակով: Բարեկարգման աշխատանքները ներառում են ավազակոպձային բարեկարգում, բազալտե եզրաքարերի, բետոնե դեկորատիվ սալիկների տեղադրում և բետոնապատում:

Գործունեության ենթակա տարածքում առկա է կանաչապատ տարածք՝ ֆուտբոլի դաշտեր, ծառեր, գազոն, ինչը պահպանվելու է: Շինարարական աշխատանքներից հետո նախատեսվում է մաքրել կանաչապատ տարածքները՝ լրացուցիչ իրականացնելով գազոնապատում, ներառելով ծաղիկների տնկում: Վերակառուցման տարածքում կանաչապատ մակերեսը կկազմի է 9270 մ<sup>2</sup>:

Շենքի կառուցման շինարարական աշխատանքները տևելու են 1 տարի

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ.

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում անհրաժեշտության դեպքում իրականացնել գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,
- մեքենաները շինհրապարակ մտնելու և դուրս գալու են մաքուր վիճակում,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացնել պարբերաբար ստուգումներ,
- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,

-շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր ծածկի տակ, ծածկել անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

-շինհրապարակը ցանկապատել,

-բացառել տարածքում թափոնների բաց այրումը:

Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսների պահպանությանն ուղղված նախատեսվում է.

-շինարարական աշխատանքների ընթացքում հողային գրունտն օգտագործվելու է հետլիցքի նպատակով, հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,



- շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի է հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը իրականացնել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում: Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել է մինչ շինհրապարակից վերջիններիս դուրս գալը:
- Շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու և/կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.
- փոշենստեցման համար ջրցանը կատարել ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը ներքին բակային ցանցով ուղղվելու են շինհրապարակում տեղադրված բիոզուգարաններ,
- ջրցանման համար օգտագործել միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում:
- Շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու.
- դիտարկման և վերահսկման էլեկտրոնային համակարգով,
- էլեկտրամատակարարման ավտոմատ անջատիչներով, վթարային ելքի ցուցիչներով, հակաձխային օդափոխության արտաձման համակարգերով,
- արտաքին լուսավորության, օդափոխության, սառնամատակարարման համակարգերով, տեսախցիկներով,
- տեսակավորված աղբամաններով,
- ավտոմատ հակահրդեհային ազդանշանային համակարգերով՝ հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով:
- Շենքի յուրաքանչյուր սենյակում տեղադրվելու են հակահրդեհային ազդանշանային, ձայնալուսային սարքեր:

**Նախատեսված է շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝**

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- իրականացվելու է բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով,
- շինարարության կանոնների և անձնական պաշտպանության, մարդու առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված միջոցառումներ,
- թափոնների տեղափոխման վերահսկում համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- շինտեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով,
- իրականացնել աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ՝ հարակից շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում,
- նշանակվելու է արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում,



- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների կատարման ապահովում:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում են տարեկան մոտ 300 հազար ՀՀ դրամ, ինչը ներառված է շինարարության նախահաշվում:

**Պատճառաբանական մաս.** Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վաղարշապատի համայնքապետարանի վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, Արմավիրի մարզպետի աշխատակազմից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով սահմանված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի ապահովմանը:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
  - շինհրապարակի տարածքում անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
  - շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ՝ փոշու տարածումը կանխող ցանցով,
  - շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
  - բացառել երեկոյան ժամերին աղմկահարույց աշխատանքների իրականացումը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վաղարշապատի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
4. Շենքերի կառուցապատման ընթացքում հաշվի առնել Կառավարության 2018թ. ապրիլի 12-ի «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշման պահանջները:
5. Հասարակական շենքի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել.
  - ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի հաստատած «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-



